ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 օգոստոսի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

118
(2598)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 76

Այս տարվա սեպտեմբերի մեկից ծերության թոշակը ավելանում է 1900 դրամով՝ 28600 դրամի փոխարեն դառնալով 30500 դրամ: Համապատասխան որոշումը ընդունվել է կառավարության երեկվա նիստում: Աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կավելանա շուրջ 3100 դրամով կամ 7.1 տոկոսով, զինվորական կենսաթոշակներինը՝ 5200 դրամով կամ 6.8 տոկոսով: Իհարկե, առաջին հայացքից կառավարությունը դրական քայլ է անում ու մտածում հանրության մասին, սակայն իրականում այս փաստը ապացուցում է, որ Փաշինյանի խոստումները հերթական անգամ չեն կատարվել: Մասնավորապես, 2021 թվականի օգոստոսի 24-ին Կառավարության՝2021-2026 թվականների գործունեության ծրագիրը ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր. «Մենք պարտավոր ենք արձանագրել մեր հանձնառությունը՝նվազագույն եւ միջին կենսաթոշակի չափերը հավասարեցնել համապատասխանաբար պարենային եւ սպառողական զամբյուղներին: Այնուամենայնիվ, նվազագույն աշխատավարձի մեր հանձառությունը ստանձնել ենք 85 000 դրամ: Եվ ստանձնել ենք հանձնառություն՝ վերացնել ծայրահեղ աղքատությունը»: Նախ արձանագրենք՝ այս պահի դրությամբ նվազագույն աշխատավարձը 68 հազար դրամ է, ծայրահեղ աղքատությունն էլ չի վերացել, եւ ավելին՝միջին կենսաթոշակի չափերը չեն հավասարեցվել պարենային եւ սպառողական զամբյուղներին, ինչպես խոստացել էր Փաշինյանը, եւ երեկվա փոփոխությամբ եւս մոտարկում չի լինի: Բանն այն է, որ Հայաստանում սպառողական զամբյուղը ամսական կտրվածքով բավականին թանկացել է: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, այս տարվա երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով, կազմել է 82 հազար 198 դրամ ամսական կտրվածքով, մինչդեռ այս տարվա առաջին եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ սպառողական զամբյուղը կազմել էր 76 հազար 299 դրամ՝ ամսական կտրվածքով: Պարենային զամբյուղի արժեքը կազմել է 44 հազար 431 դրամ՝ ամսական կտրվածքով: Սրան զուգահեռ՝ընդգծենք, որ, այս փոփոխություններով, սեպտեմբերի մեկից հանրապետությունում կենսաթոշակի չափը դառնալու է 30500 դրամ, նվազագույն աշխատավարձն էլ շարունակում է մնալ 68 հազար դրամ: Նույն Նիկոլ Փաշինյանը, դեռ 2016 թվականի սեպտեմբերի 19-ին խոսելով այդ ժամանակվա իշխանությունների կողմից թոշակի ավելացման մասին, նշել էր. «Սերժ Սարգսյանն ու իր եկամուտներն ավելի կարեւոր են, թոշակն էլ կարող է բարձրանալ միայն 300, 500, 1000 դրամով»: Եվ, ահա, այսօր թոշակը բարձրանում է 1900 դրամով: Ստացվում է՝Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները կրկին մանիպուլացնող են եղել, եւ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ քաղաքացիներին:

Վարչապետի տիկին Աննա Հակոբյանը երկու օր շարունակ շրջել է Արագածոտնի մարզում ու նոր ֆոտոշարքով «զմայլել» ՀՀ «հպարտ ու արժանապատիվ» քաղաքացիներին: Վարդերի մեջ, վարդերը գրկում, «քոթուկների» վրա նստած են այս անգամվա լուսանկարները: Տիկին Աննան չի մոռացել նաեւ մոմ վառելու մասին՝ իհարկե Աստծո տուն առանց գլխաշորի մտնելով: Այս ողջ ընթացքում նրան ուղեկցել են պետական բարձրաստիճան պաշտոնյաներ: Ինչո՞ւ, ի՞նչ կարգավիճակով: «Որպես վարչապետի տիկին ու «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ենք ուղեկցել Աննա Հակոբյանին, ու դրա մեջ արտառոց ոչինչ չկա»,-«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, որ երկու օր շարունակ իր գործընկերների հետ ուղեկցել է Փաշինյանի տիկնոջը: Տպավորություն է, թե Արագածոտնի այն համայնքի ղեկավարները, որտեղ այցելել է տիկին Աննան, շունչները պահած ու գործերը թողած, հոգ են տարել, ուղեկցել Հակոբյանին: Աշտարակի քաղաքապետ Թովմա Շահվերդյանն է ամենից շատ երեւում Աննա Հակոբյանի գրասենյակի կողմից հրապարակված լուսանկարներում: Գրեթե բոլոր այցերի ընթացքում տիկնոջը թիկունքից ուղեկցում է ՀՀԿ-ի իշխանության ժամանակ քաղաքապետի աթոռը զբաղեցրած ու մինչեւ այժմ դրա վրա հարմարավետ բազմած Շահվերդյանը: Ուշագրավն այս պատմության մեջ այն է, որ Արագածոտնի մարզպետարանի կայքում վերջին 2 օրերին երեք նյութ է տեղադրված՝ իբրեւ մարզպետարանի գործունեություն՝ թե ինչպես է մարզպետը ուղեկցել վարչապետի տիկնոջը:

⇨ էջ 2

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 2022 թվականի հուլիսի 2-ին հայաստանյան մի շարք դատախազներ հավաքվել են ռեստորանում՝ նշելու Դատախազի օրը, որը հուլիսի 1-ին էր: Մասնավորապես, խնջույքին հրավիրված են եղել համայնքային դատախազները եւ Գլխավոր դատախազության դատախազները, այն մարդիկ, որոնք ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի մտերիմներն են: Մեր աղբյուրները փոխանցում են, որ խնջույքի ժամանակ միջադեպ է արձանագրվել: Համայնքային դատախազներից մեկը գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հետ համատեղ բարձր խոսել է: Նրան նկատողություն են արել, թե՝ չե՞ս տեսնում՝ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն է խոսում, լռի՛ր. գինովցած դատախազը պատասխանել է՝ ի՞նչ անենք, որ գլխավոր դատախազն է խոսում. ես էլ եմ խոսում: Այս խոսակցությունն այն աստիճան է թեժացել, որ համայնքային դատախազին դուրս են հրավիրել եւ փորձել նրա հետ հաշիվ մաքրել: Արդեն դրսում հնչել են փոխադարձ վիրավորանքներ, քաշքշուկ է տեղի ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել ՀՀ գլխավոր դատախազությունից, թե համայնքային որ դատախազի հետ են փորձել հաշիվներ մաքրել՝ նրան դուրս հրավիրելով եւ քաշքշելով: Ի պատասխան՝դատախազության հանրային կապերի բաժնից հայտնեցին, թե տեղեկությունը բացարձակ սուտ է:

Երեկ պաշտոնապես հայտնի դարձավ, որ Հայաստանի կառավարությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաժնետոմսերից եւս 6.8 տոկոս նվիրատվություն կստանա: Նվիրատվությունը վարչապետի աշխատակազմին կատարել է ԶՊՄԿ-ի բաժնետեր ընկերություններից մեկը՝ «ԱՄՓ հոլդինգ»-ը: Եվ հենց այստեղ է ամենաուշագրավ հանգամանքը. «ԱՄՓ հոլդինգ»-ի բաժնետեր ընկերությունը «Սթար դասթ» ՍՊԸ-ն է, որի բաժնետերերն են ԶՊՄԿ-ի նախկին տնօրեն Միեր Պոլոսկովը, «Հայաստան» դաշինքի պատգամավոր Վահե Հակոբյանի եղբայր Կարեն Հակոբյանը եւ Գուրգեն Ամբարյանը: Այսինքն՝ստացվում է՝ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Հակոբյանի եղբայրը բաժնետոմսեր է նվիրաբերել կառավարությանը, թե ինչի դիմաց՝կպարզենք: Ստացվում է, որ, մի կողմից, Սյունիքի նախկին մարզպետն ամիսներ շարունակ պահանջում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, մյուս կողմից՝նրա եղբայրը փաստացի նվիրաբերություններ է կատարում ՀՀ կառավարությանը՝ ՔՊ-ի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի գլխավորած ֆոնդին: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հենց Վահե Հակոբյանից պարզաբանումներ ստանալ՝ հասկանալու, թե ինչու է նրա եղբայրը նման քայլի գնացել, սակայն նրա հեռախոսն անջատված էր: Հավելենք, որ, ընդհանուր առմամբ, «ԱՄՓ հոլդինգ»-ին էր պատկանում Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի 12.5 տոկոսը: Անցած տարվա սեպտեմբերի 30-ին էլ ռուս միլիարդատեր Ռոման Տրոցենկոն էր ձեռք բերել Պղնձամոլիբդենայինի 60 տոկոսը, որից հետո դրա 15 տոկոսը նվիրեց կառավարությանը: Նվիրատվության գործարքը, ինչպես նաեւ Ռոման Տրոցենկոյի կողմից կոմբինատում բաժնետոմսեր ձեռք բերելու գործարքը վիճարկվում է ԶՊՄԿ-ի 12,5 տոկոսի բաժնետեր Միխայիլ Զուրաբովի կողմից,այդ թվում՝ միջազգային ատյաններում: Այս թեմայով «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունները շարունակվում են:

ԵՐԿՕՐՅԱ ՇՐՋԱՅՑ

ՄԱՐԶԻՆ ԷԻՆ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի երկօրյա այցն Արագածոտնի մարզ ավարտվել է:

Տիկին Հակոբյանն արագածոտնյան օրերի ընթացքում մարզի մշակութային, կրթական օջախներ, ինչպես նաեւ հյուրատներ ու բիզնես-գործունեություն իրականացնող կազմակերպություններ է այցելել: Չի մոռացել նաեւ ՀՀ շարքային (ըստ իր գրասենյակի ներկայացրածի՝ սոցիալապես ոչ ապահով) ընտանիքների ու քաղաքացիների հետ շփվել, նրանց երեխաներին գրկել, լուսանկարվել, այցն այդպես ամփոփել: Եկեղեցի էլ է մտել, մոմ վառել, գուցե նաեւ զրուցել հոգեւոր թեմաներից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Աննա Հակոբյանն Արագածոտն այցելած օրերին մարզի հյուրանոցներից կամ հյուրատներից որեւէ մեկում չի գիշերել, հետ՝ Երեւան է գնացել: Աննա Հակոբյանի գրասենյակի, ինչպես նաեւ Արագածոտնի մարզպետարանի տարածած լուսանկարներից ու տեսանյութերից երեւում է, որ Փաշինյանի տիկնոջն ուղեկցում են մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, Աշտարակի՝դեռեւս «նախկինների» ժամանակից պաշտոնավարող քաղաքապետ Թովմա Շահվերդյանը, զոռով-շառով Թալինի համայնքապետ ընտրված, բայց այդպես էլ չպաշտոնավարած Տավրոս Սափեյանը, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մարզային կառույցի ներկայացուցչներից շատերը եւ այլք: «Ժողովուրդ» օրաթերթն Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի հետ զրուցել է վարչապետի տիկնոջ՝ մարզ կատարած այցի մանրամասների մասին:

-Պարոն Մովսիսյան, Աննա Հակոբյանը պետական պաշտոնյա չէ, Դուք եւ մարզի այլ պաշտոնյաներ ինչո՞ւ էիք ուղեկցում նրան:

-Որպես վարչապետի տիկին, որպես «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ ենք ուղեկցել. ինչի՞ մասին է խոսքը: Ծանոթացնում էինք մեր մարզին, տեսարժան վայրերին: Մշակութային հարցեր ենք հիմնականում քննարկել:

-Մեզ հետաքրքիր է, թե ինչ առանձնահատուկ կարգավիճակ ունի Աննա Հակոբյանը, որ նրան ուղեկցել եք: Մարզ տարբեր այլ պաշտոնյաների կանայք կարող են այցելել, հո բոլորին չե՞ք ուղեկցելու:

-Վարչապետի կինն ու մնացած պաշտոնյաների կանայք նույնը հո չե՞ն: Բացի այդ, կրկնեմ՝նա «Իմ քայլը» հիմնադրամն է ներկայացնում, ու մի շարք գործեր կան, որ «Իմ քայլը» հիմնադրամով կարող ենք անել:

-Որտե՞ղ եք եղել, քանի՞ շրջայց եք միասին կատարել:

-Բոլոր այցերը լուսաբանված են, ու այժմ, հնարավոր է, ոչ բոլորը հիշեմ: Եկեղեցի ենք գնացել, մշակութային, կրթական հաստատություններ ենք գնացել, մանկական զարգացման կենտրոն ենք գնացել եւ այլն:

-Վարչապետի տիկնոջ այցն ի՞նչ է տվել մարզին: Նոր խոստումներ, հեռանկարներ, իրականացվելիք ծրագրերի կամ ներդրումների տեսլականներ եղե՞լ են:

-Բայց ինքը ներդրումների հետ առանչություն չունի: Կարող եմ ասել, որ այցը ստացված էր, ու դրական ազդակներ կլինեն ապագայում: Այսպես, թե այնպես, մարզում շատ ծրագրեր ունենք իրականացնելու, մոտ ժամանակներս բավական շատ աշխատատեղեր կբացվեն, ներդրումային մեծ ծրագրեր կունենանք: Երեւի լսած կլինեք՝ մարզի տարբեր համայնքներում լեռնադահուկային համալիր կառուցելու աշխատանքներն արդեն սկսել են, որոնք մեծ թվով աշխատանքներ կստեղծեն: Այդ համալիրները շահագործելու հետ կապված՝ այժմ էլ շինհրապարակներում մեծ թվով մարդիկ են աշխատում, բայց երբ դրանք շահագործման հանձնվեն, պարզ է՝ նոր աշխատատեղեր կբացվեն:

-Տպավորություն է, թե մարզպետը, մի ամբողջ մարզի գործերը թողած, վարչապետի տիկնոջն է ուղեկցում:

-Իսկ ո՞վ է ասում, թե մարզպետը մարզի գործերով չի զբաղվում: Այդ այցին զուգահեռ՝ նաեւ մարզի գործերով էի զբաղվում, իսկ այս կամ այն հաստատություններ, այսպես, թե այնպես, պետք է այցելեի: Վստահեցնում եմ՝ մարզի գործն ընդհանրապես չէի տուժել, ընդհակառակը, ավելի է առաջ ընկել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՐԳԵԼԵԼ Է

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Ադրբեջանի հանցավոր վարչակազմը հերթական անօրինական որոշմամբ 2022թ. հունվարից արգելել է Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի շրջաններում անհայտ կորած հայ զինծառայողների եւ քաղաքացիական անձանց մարմինների որոնողական աշխատանքները՝ փորձելով հոգեկան տառապանքներ պատճառել համայն հայությանը:

2020թ. նոյեմբերի 10-ի եւ 2021թ. հունվարի 11-ի՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների հայտարարություններով ամրագրված է առաջնային կարեւորություն ունեցող հումանիտար խնդիրների հրատապ կարգավորումը, այդ թվում՝ «ռազմագերիների, պատանդների եւ պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակումը», սակայն Ադրբեջանը հերթական անգամ միակողմանիորեն ոտնահարում է միջպետական պայմանավորվածությունները՝միաժամանակ հարվածելով նաեւ միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերին, որոնք ամրագրված են «Պատերազմի զոհերի պաշտպանության մասին» Ժնեւի 1949թ. չորս կոնվենցիաներում եւ «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնեւի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից՝Ժնեւի՝1977 թվականի լրացուցիչ արձանագրությամբ, երկու լրացուցիչ արձանագրություններով, որոնք զինված հակամարտության ժամանակ մարդու պաշտպանությանն ուղղված կանոնների համակարգ են:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան անդամ պետությունների միջեւ ստեղծում է փոխադարձ նախաձեռնությունների եւ օբյեկտիվ պարտավորությունների համակցություն, եւ գործում է փոխադարձության սկզբունքը: Ակնհայտ է միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների կատարման հրամայականը, ուստի հերթական դիմումներս եմ ուղղում միջազգային գործընկերներիս՝ դատապարտելու Ադրբեջանի այս հանցավոր վարքագիծը եւ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ՝ ի պաշտպանություն անհայտ կորած հայ զինծառայողների եւ քաղաքացիական անձանց, նրանց ընտանիքների հիմնարար իրավունքների:

Ադրբեջանի այս հանցավոր վարքագիծը օբյեկտիվ հարց է առաջացնում. եթե Ադրբեջանը չի կատարում նույնիսկ միջազգային մարդասիրական իրավունքի պահանջները, ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը կյանքի կոչում Ի. Ալիեւի պահանջները: Ադրբեջանի կողմից այս հումանիտար պահանջների չկատարումն իրականում ընդդիմանալու եւ պահանջատիրոջ դիրքերից հանդես գալու հնարավորություն է ընձեռում՝ ի պաշտպանություն հումանիտար իրավունքի, սակայն Նիկոլ Փաշինյանը անհասկանալի դրդապատճառներով չի անում»:

ՔԱՐՏԵՐԸ՝ ԹՇՆԱՄՈՒ ՁԵՌՔԻՆ

2020թ-ի հուլիսի 24-ին ԱԱԾ-ն մի աղմկահարույց հայտարարությամբ հանդես եկավ՝ հայտնելով, որ Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների աշխատակիցներն օգտագործում են ՀՀ տարբեր բջջային օպերատորների հեռախոսահամարներ եւ դրանցով զանգահարելով ՀՀ քաղաքացիներին՝ անկախ հետազոտություններ անցկացնելու պատրվակով, իբրեւ կատարում են սոցհարցումներ ՀՀ-ում, հատկապես զինված ուժերում տիրող իրավիճակի վերաբերյալ հետախուզական բնույթի տեղեկություններ են ստանում: Ըստ պաշտոնական տեղեկության՝ նմանօրինակ հեռախոսազանգեր են արձանագրվել ՀՀ 094-39-75-95 եւ 093-52-72-08 բջջային հեռախոսահամարներից: Այսինքն՝ «Վիվա ՄՏՍ»-ի կոդով հեռախոսահամարներից են թշնամիները ահաբեկել, ինֆորմացիաներ կորզել մեր հայրենակիցներից: Ինչպե՞ս են ադրբեջանցիները դարձել «Վիվա ՄՏՍ»-ի քարտի տերեր: Ինչպե՞ս է բարեգործություններով հայտնի «Վիվա ՄՏՍ» ընկերությունը ադրբեջանցիներին բջջային քարտեր բաժանել, ընդ որում՝ Վիվայի քարտերը ոչ թե շարքային ադրբեջանցիների ձեռքին են հայտնվել, այլ հատուկ ծառայությունների աշխատակիցների: «Ժողովուրդ» օրաթերթը փոքրիկ հետաքննություն է իրականացրել այս թեմայով, եւ ՀՀ ԱԱԾ-ին ուղղված մեր այս հարցին Ազգային անվտանգության ծառայության մամուլի կենտրոնից պատասխանել են. ««ՄՏՍ Հայաստան» ընկերությունը, այնպես էլ ՀՀ-ում գործող մյուս բջջային օպերատորները Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցներին, Ադրբեջանի քաղաքացիներին, ադրբեջանական անձնագրեր ունեցող անձանց հեռախոսահամարներ չեն վաճառել»: Այդ դեպքում ինչպե՞ս են հայտնվել նրանց ձեռքին «Վիվա ՄՏՍ»-ի քարտերը: Շարունակելի....

ԵՌԱՄՍՅԱ ՀԱՎԱՔՆԵՐ

Հայտարարվել է՝ պահեստազորի առաջին խմբի առաջին եւ երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ կանցկացվեն՝ երեք ամիս ժամկետով, 2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը:

Armlur.am-ը տեղեկացավ, որ վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,
2) մասնագիտական վերապատրաստման,
3) մասնագիտական պատրաստման,
4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դատական հայց է ներկայացվել Ազգային ժողովի աշխատակազմի դեմ: Ժորա Հակոբյան դիմել է Վարչական դատարան՝ ընդդեմ Ազգային ժողովի՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Ազգային ժողովի աշխատակազմին 22.06.2022թ. թիվ 458 հրամանն անվավեր ճանաչել, հայցվորին նախկին աշխատանքում վերականգնել, հայցվորի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար բռնագանձել:

Դատելով իրավիճակից՝ Ազգային Ժողովի աշխատակիցները չեն կարողանում բանավոր ճանապարհով խնդիրը լուծել, ընկել են դատարանի դռները:

ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԱՎԻՆՅԱՆԻ ՖՈՆԴԻՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության՝ ՀՀ սեփականությունը հանդիսացող 6,875% բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձվեցին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ հավատարմագրային կառավարմանը: Նշենք, որ այս ֆոնդի տնօրենների խորհրդի նախագահը Տիգրան Ավինյանն է, որը իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն է:

«Ժողովուրդ» օրաթերթը մայիսին գրել էր, որ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» (ԱՆԻՖ-ը) ընկերությունը պետական միջոցներով իտալական արտադրության բազմաֆունկցիոնալ էսպրեսսրճեփ է գնել: Սրճեփի համար պետական միջոցներից ծախսվել է 245 հազար դրամ գումար: Մեզ հայտնի դարձավ, որ ապրիլ ամսին ընկերությունը եւս մեկ սրճեփ է գնել 80 հազար դրամով: Բացի այս, ArmLur.am-ը ԱՆԻՖ-ի ընթացիկ տարվա գնումների պլանից տեղեկացել էր, որ համացանցային ծառայության համար նախատեսվել է ծախսել 360 հազար դրամ, կորոնավիրուսի թեստավորման (այդ թվում՝ թեստավորման տնայցի եւ գրասենյակ այցի ծառայության) համար՝ 900 հազար դրամ, առողջության ապահովագրման ծառայությունների համար՝ 6 մլն 525 հազար դրամ:

Իսկ գրասենյակային տարածքների վարձակալության համար նախատեսվում է ծախսել 30 մլն դրամ: Գազավորված եւ չգազավորված ջրեր ձեռք բերելու համար ընկերությունը մտադիր է ծախսել 90 հազար դրամ, անձեռոցիկների համար՝ 60 հազար դրամ, թղթե սրբիչներ՝ 25000 դրամ, թեյնիկի համար՝ 8000 դրամ: Միայն գեղարվեստական գործունեության հետ կապված ծառայությունների համար նախատեսվում է ծախսել 900 հազար դրամ:

Մեզ հայտնի էր դարձել որ ընթացիկ տարվա ապրիլի 11-ի հրամանով հաստատված գնումների պլանով նախատեսված է ծախսել 95 մլն 509 հազար դրամ: Բացի այս, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ այս ընկերությունը նախորդ տարեվերջին 900 հազար դրամով գնել է հեռուստացույց:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍԱՐՍԱՆԳ

Ստեփանակերտը երեկ հաստատել է, որ ադրբեջանցի մասնագետներն այցելել են Արցախի Մարտակերտի շրջան՝ հայկական վերահսկողության տակ գտնվող Սարսանգի ջրամբար: Այդ մասին երեկ ադրբեջանական լրատվամիջոցներն էին հաղորդել՝ նշելով՝ «Ադրբեջանի Մելիորացիա եւ ջրային տնտեսություն» ընկերության մասնագետները հայ մասնագետների հետ միասին դիտարկել են ջրամբարի տարածքը, ստացվել է տեղեկություն ջրի ներհոսքի ու բացթողման ժամանակացույցի վերաբերյալ:

Արցախի տեղեկատվական շտաբից երեկ հայտնել են, որ հանրությանը մատակարարվող խմելու ու ոռոգման ջրերի անվտանգության ապահովման նպատակով Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի միջնորդությամբ Արցախի Ջրային կոմիտեի ներկայացուցիչները դեռեւս 2021 թվականից շփվում են ադրբեջանական կողմի հետ եւ պարբերական այցեր են կատարում Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող հատվածներ:

«Այդ շրջանակներում հերթական հանդիպումը կազմակերպվել էր Սարսանգի ջրամբարի մոտ Սարսանգի ջրերի փոխշահավետ օգտագործման հարցի քննարկման նպատակով: Տեղում մտքեր են փոխանակվել ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հնարավոր տարբերակների շուրջ՝ հաշվի առնելով Սարսանգի ջրամբարի հանդեպ Արցախի Հանրապետության վերահսկողությունը, իսկ ոռոգման ենթակառուցվածքների հանդեպ՝ ադրբեջանական վերահսկողությունը: Առաջիկայում քննարկումները կշարունակվեն, եւ որոշումները կկայացվեն՝ Արցախի Հանրապետության շահերից ելնելով, հիմք ընդունելով եւ՛ էլեկտրաէներգիայի արտադրության, եւ՛ ոռոգման կարիքները Սարսանգի հատվածում, ինչպես նաեւ խմելու եւ ոռոգման ջրերի հետ կապված կարիքները Հանրապետության այլ հատվածներում», - ասված է հաղորդագրությունում:

Սարսանգը Արցախի խոշորագույն ջրամբարն է, որը շահագործման է հանձնվել դեռ 1976 թվականից: Գտնվում է Ստեփանակերտից մոտ 60 կմ դեպի հյուսիս եւ ամբողջությամբ հայկական վերհսկողության տակ է: Ջրատարողությունը շուրջ 600 մլն խորանարդ մետր է, ապահովվում է Արցախի էլեկտրաէներգիայի եւ ոռոգման պահանջարկի մեծ մասը:

Միեւնույն ժամանակ ռուս խաղաղապահներն ապամոնտաժում են Բերձորի (Լաչին) միջանցքում գտնվող անցակետերը, շենքերը, որտեղ բնակվում էին ռուս զինվորականներն ու ծառայություն իրականացնում: Ռուս խաղաղապահների՝ Լաչինի միջանցքից անցակետերը հեռացնելու տեսանյութն ադրբեջանական գործակալություններցի մեկն է տարածել:

Նշենք, որ բացառապես երեկ Արցախի Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները հանդիպել էին Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող ռուսական զորախմբի ներկայացուցիչների հետ: Ընդդիմադիր «Արդարություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Գալստյանն ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել էր, որ ռուսական զորախմբի ներկայացուցիչներից բանավոր հավաստիացում են ստացել՝ մինչեւ Լաչինի միջանցքին փոխարինող այլընտրանքային ճանապարհը վերջնական ու ամբողջապես պատրաստ չլինի եւ շահագործման չհանձնվի, իրենք այդտեղից չեն հեռանալու: Երեկ, սակայն, ադրբեջանական լրատվամիջոցները ռուսական զորախմբի անցակետերն ապամոնտաժելու մասին տեսանյութ են տարածել:

Սրան զուգահեռ՝ ՀՀ կառավարության երեկվա՝ օգոստոսի 24-ի որոշմամբ՝ գործադիրը գումար կհատկացնի Հայաստանն Արցախին կապող այլընտրանքային նոր ճանապարհի՝ Տեղ-Կոռնիձոր հատվածի մոտ 12 կմ-ի վերակառուցումն իրականացնելու համար: Ստացվում է՝ Լաչինի միջանցքին փոխարինող նոր ավտոճանապարհը նախանշվող ժամկետներից էլ շուտ կարող է շահագործման հանձնվել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿԿՈՂՄ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Հայկական կողմի նախաձեռնությամբ կայացել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հեռախոսազրույցը Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Այս մասին հայտնում է Կրեմլի պաշտոնական կայքը:

Շարունակվել է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկումը: Վերահաստատվել է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ պայմանավորվածությունների հետեւողական իրագործման կարեւորությունը: Միաժամանակ նշվել է ռուսական խաղաղապահ զորակազմի դերը տարածաշրջանում կայունության ապահովման գործում:

Անդրադարձ է կատարվել Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական գործընկերության եւ դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացման որոշ արդիական հարցերի:

ՄԻԵԴ–Ը ՄԵՐԺԵԼ Է ԴԻՄՈՒՄԸ

Օգոստոսի 18-ին Ադրբեջանը դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ խնդրելով պարտավորեցնել Հայաստանին անմիջապես եւ անվերապահ պարտավորեցնելու իր վերահսկողության տակ գտնվող ուժերին եւ կառույցներին դադարեցնելու Բերձոր քաղաքի եւ շրջակա գյուղերի գույքի ոչնչացումը՝ ներառյալ տների այրումը, եւ տրամադրելու տեղեկատվություն ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը հայտնում է, որ օգոստոսի 22-ին ՄԻԵԴ-ը մերժել էր Ադրբեջանի դիմումը եւ արձանագրել, որ բացակայում է նոր միջանկյալ միջոց կիրառելու անհրաժեշտությունը:

ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի չեմպիոնները, որոնք Հայաստանի քաղաքացիություն են ստացել երկրի դրոշի ներքո մարզական միջոցառումներին մասնակցելու համար, զինվորական ծառայության տարկետման իրավունք կստանան: Օգոստոսի 24-ին համապատասխան որոշումն ընդունվել է Հայաստանի կառավարության նիստում:

Ներկա պահին տարկետման իրավունքից կարող են օգտվել նաեւ օլիմպիական եւ ոչ օլիմպիական մարզաձեւերի այլ մարզիկներ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում բացահայտվել է պետական բյուջեից խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով գումարներ հափշտակելու հանցավոր մեխանիզմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի միջմարզային բեռնափոխադրումների գործունեություն իրականացրած ՍՊ ընկերության անունից 2022թ. հունիսի 30-ին հարկային մարմին են ներկայացվել կեղծ տվյալներ պարունակող եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ճշտված հաշվարկներ, որոնցով նվազեցվել են ընկերության կողմից նախկինում ճշգրիտ հաշվարկված եւ պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարները: Արդյունքում առանձնապես խոշոր չափերով՝ 63 միլիոն ՀՀ դրամ եկամտային հարկի գումարները համարվել են ավել վճարված եւ վերադարձվել են հարկերի միասնական հաշվին: Դեպքի առթիվ ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ 2022 թ. հունիսի 11-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում նույն եղանակով հարկային մարմին են ներկայացվել 4 այլ կազմակերպությունների՝ կեղծ տվյալներ պարունակող եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ճշտված հաշվարկներ, ինչի արդյունքում այդ ընկերությունների կողմից նախկինում ճշգրիտ հաշվարկված եւ պետական բյուջե վճարված ընդհանուր առմամբ 495 միլիոն ՀՀ դրամ եկամտային հարկի գումարները համարվել են ավել վճարված եւ վերադարձվել են հարկերի միասնական հաշվին: Պարզվել է, որ նշված կազմակերպությունների կեղծ տվյալներով հարկային հաշվարկները չեն ներկայացվել դրանց իրական շահառուների կողմից, այլ ընկերությունների միջոցով պետական բյուջեից առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 560 միլիոն ՀՀ դրամի հափշտակությունը նախապես պլանավորված մեխանիզմով կազմակերպել են ՀՀ քաղաքացիներ Հ.Ք.-ն եւ Գ.Ն.-ն:

Մասնավորապես, նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հ.Ք.-ն եւ Գ.Ն.-ն իրենց հանցավոր մտադրություններն անխոչընդոտ իրագործելու եւ հանցագործությունը քողարկելու նպատակով մինչեւ պետական բյուջեից գումարներ հափշտակելը՝ 2022 թվականի հունիս ամսին, առանց իրական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության, հիմնադրել են 9 ընկերություն, ինչպես նաեւ այդ ընկերությունների եւ իրենց անվամբ ՀՀ-ում գործող տարբեր առեւտրային բանկերում բացել են 23 բանկային հաշվեհամար:

Այնուհետեւ, վերադարձվող գումարների մեծությամբ պայմանավորված, հարկային հսկողությունից խուսափելու եւ հարկային ծառայողների տեսադաշտում չհայտնվելու նպատակով նշված անձինք հարկային մարմին են ներկայացրել 167 դիմում՝ եկամտային հարկի գումարները մաս-մաս հարկերի միասնական հաշվից իրենց կողմից բացված հաշվեհամարների նվերադարձնելու մասին, որոնց հիման վրա՝ գումարները փոխանցվել են այդ հաշվեհամարներին:

Այնուհետեւ Հ.Ք.-ն եւ Գ.Ն.-ն հափշտակված գումարների հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով դրամական միջոցները բազմաթիվ գործարքներով շրջանառել են իրենց, այդ թվում՝ նոր հիմնադրված ընկերությունների բանկային հաշիվներով եւ էլեկտրոնային դրամապանակներով ու կանխիկացնելով տնօրինել: Պետական բյուջեից հափշտակված գումարի մյուս մասը հնարավորություն չեն ունեցել տնօրինել վարույթն իրականացնող մարմնի կողմից անհապաղ կիրառված արգելադրման պատճառով:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ Հ. Ք.-ի եւ Գ. Ն.-ի նկատմամբ որոշումներ են կայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով՝ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

Պետական եկամուտների կոմիտեի քննչական, հետաքննության եւ օպերատիվ հետախուզության, մաքսանենգության դեմ պայքարի վարչությունների ու Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցների համատեղ եւ համակարգված գործողությունների արդյունքում Հ. Ք.-ն եւ Գ.Ն.-ն հայտնաբերվել են, ձերբակալվել ու ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Վերջիններիս, ՀՀ քրեական օրենսգրքի 255 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ներկայացվել են մեղադրանքներ, եւ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով օպերատիվ-հետախուզական միջոցառումները եւ քննչական գործողությունները շարունակվում են, եւ միջոցներ են ձեռնարկվում հանցավոր շղթայում ներգրավված հանցակիցներին, պետությանը պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ:

ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՈՒՅՆՆ Է

ՀՀ պետական վերահսկողության ծառայության ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը երեկ Հանրային հեռուստաընկերության եթերում ինքնախոստովանություններով հանդես եկավ, թե ինչպես է հեղափոխական ժամանակահատվածում Երեւանի քաղաքապետարանը շարունակում մնալ թաքնված կոռուպցիայի մեջ, եւ ինչպես չի հաջողվել հեղափոխական քաղաքապետ Հայկ Մարությանին վերացնել կոռուպցիան այդ մարմնից:

Խոսքն այն քաղաքապետի մասին էր, որին իշխող թիմի բոլոր ներկայացուցիչները պաշտպանում էին բոլոր իրավիճակներում՝ աչք փակելով կոռուպցիոն բոլոր երեւույթների վրա: Այդ մասին շատ ենք գրել: Այժմ անդրադառնանք Հայաստանի մեկ այլ կոռումպացված կառույցին՝ Պետական առողջապահության գործակալությանը՝ ՊԱԳ, որի գործունեությունը դարձյալ ՊՎԾ-ի թիրախում է:

Երեկ նաեւ Ռոմանոս Պետրոսյանը հայտարարեց. «Եթե պետական մարմիններում վերահսկողական մարմինները հավուր պատշաճի գործեն, ՊՎԾ-ն անելիք չի ունենա: ՊԱԳ-ով տրված պետպատվերների ձեւավորման հայտերի ներկայացման եւ ֆինանսավորման գործընթացի մասով կան բավականին լուրջ ընթացակարգային խնդիրներ, իսկ որտեղ ընթացակարգային եւ օրենսդրական բացեր կան, այնտեղ ակտիվանում են անբարեխիղճները, բույն է դնում կոռուպցիան, ցավոք»:

Հիշեցնենք, որ ՊԱԳ-ը բոլոր ժամանակներում է աչքի ընկել անբարեխիղճ եւ կոռումպացված գործունեությամբ, ինչպես նկարագրեց Պետրոսյանը: Դեռ 2016 թվականին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում քննվող մի քրեական գործով հունիսի 13-ին ձերբակալվել են ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահության գործակալության պետ Սարո Ծատուրյանը, Երեւանի քաղաքային կենտրոնի պետ Արսեն Սեդրակյանը, գործակալության բժշկական ծառայությունների գնման եւ տեղեկատվական բաժնի նախկին պետ Սամվել Խարազյանը: Նրանք կասկածվում են պաշտոնեական դիրքը չարաշահելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը սկսել է հետաքննություն՝ պարզելու, թե ինչ եղավ այս գործը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԱԼԱՆՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հովհաննես Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ Հովհաննես Անդրանիկի Ալեքսանյանի հետ միասին, խմբի կազմում նախնական համաձայնությամբ, 2022 թվականի ապրիլի 3-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, իր կողմից շահագործվող «Պորշե» մակնիշի, 35 QM 282 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ժամանել են Երեւան քաղաքի Բագրատունյաց 70 հասցեում գտնվող «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի արտադրամաս, շրջանցելով «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի գույքի պահպանման համար նախատեսված տարածքի դարպասները՝ մուտք են գործել արտադրամասի տարածք, ապամոնտաժել են այնտեղ գտնվող պոլիկլինիկայի ալյումինե շրջանակներով պատրաստված պատուհանները եւ դռները, որից հետո արդեն ապամոնտաժված, ընդհանուրը 101.800 ՀՀ դրամ արժողությամբ ալյումինե կոնստրուկցիաները տեղավորել են գործարանի մուտքի դիմաց կայանված վերը նշված ավտոմեքենայի բեռնախցիկում եւ սրահում, ինչից հետո էլ փորձել են դրանք գաղտնի հափշտակել, սակայն հանցագործությունն իրենց կամքից անկախ հանգամանքներում ավարտին չեն հասցրել, քանի որ ժամը 20:05-ի սահմաններում բռնվել են տարածքում ծառայություն իրականացնող պարեկային ոստիկանության աշխատակիցների կողմից եւ գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկվել ոստիկանության Շենգավիթի բաժին:

ՈՒՇԱԳՐԱՎ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Անդրանիկ Փոիլոյանի պաշտպան Տիգրան Սարգսյանը ArmLur.am-ին ուշագրավ մանրամասներ է հայտնել, թե ինչ է կատարվում արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանի դեմ հարուցված քրեական գործով: Հիշեցնենք, որ 2022 թվականի մարտի 31-ին Հակակառուցիոն կոմիտեն հայտնել էր, որ արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանին մեղադրանք է առաջադրվել, քրեական գործով եւս 8 անձ ունեն մեղադրյալի, իսկ ավելի քան 10 անձ՝ կասկածյալի կարգավիճակ: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ ԱԻ նախարար Ա. Փիլոյանը նախարարության հետ համագործակցող ՍՊ ընկերության օգտին իր լիազորությունների շրջանակում գործողությունների կատարման համար իր խորհրդական Ա. Հ.-ի օժանդակությամբ 2022թ.-ին ստացել է խոշոր չափերով կաշառք: Ի դեպ, նախաքննության ընթացքում Ա.Հ.-ի բնակության վայրի խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել են հրազեն եւ ռազմամթերք: Պարզվել է նաեւ, որ նախարարության ստորաբաժանումներից մեկի ղեկավար Հ.Ե.-ն, օգտագործելով պաշտոնեական դրությունը, միջնորդել է ԱԻ նախարարի կողմից ջեռուցման համակարգի տեսքով խոշոր չափերով կաշառք ստանալուն համապատասխան անձին նախարարությունում աշխատանքի ընդունելու համար:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 40 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴԱՆԱԿԻ 10 ՀԱՐՎԱԾ

Օգոստոսի 22-ին Իջեւան խոշորացված համայնքի՝ Ադրբեջանին սահմանամերձ Վազաշեն գյուղի «Վիշկի յալ» տարածքում սպանվել է Վազաշենի 23-ամյա բնակիչ Սեւադա Ղազարյանը: Վազաշենի բնակիչները հայտնեցին, որ նրան սպանել են դանակի 10 հարվածներով, որից 7-ը եղել է թիկունքից, 3-ը դիմացից՝ կրծքավանդակից: Նրան սպանողը այնուհետեւ, դիակի վրա վառելանյութ լցնելով, այրել է դիակը: Սպանվածը նախկինում եղել է ոստիկանության պահակային բաժնի աշխատող, այնուհետեւ՝ պայմանագրային զինծառայող, մասնակցել է 44-օրյա պատերազմին: Ոստիկանները գործել են շատ օպերատիվ եւ բացահայտել են սպանության դեպքը:

Այդ սպանության գործով ձերբակալվել է Վազաշենի հարեւան՝ սահմանամերձ Այգեհովիտ գյուղի բնակիչ: Նախնական տվյալներով՝ սպանության պատճառը գումարի հետ կապված չլուծված հարցն է:

ՀԱՆՎԵԼ Է ՊԱՀԱԿԱԿԵՏԸ

Դիլիջան քաղաքում՝ Դիլիջանի առաջին ոլորանում տեղակայված ոստիկանական 3 ավտոմեքենաներից եւ ոստիկանների եւ բնապահպանների խմբից բաղկացած պահակակետը հանվել է:

Այն տեղակայվել էր Տավուշի մարզից ապօրինի փայտանյութի արտահանումը կանխելու նպատակով, սակայն Տավուշի մարզում ապօրինի անտառհատումները շարունակվում են: Իջեւան քաղաքում պատմեցին, որ վերջերս հայրենի գյուղի՝ Ենոքավանի անտառում հանգստացող, քեֆ անող վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանկարծ բենզասղոցի ձայն է լսել եւ քեֆը կիսատ թողնելով՝ գնացել է ձայնի ուղղությամբ եւ հանդիմանել ապօրինի ծառ հատող գյուղացուն:

ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի «Քայլող մարդու» արձանը միջպետական ավտոճանապարհի եզրին 2 անգամ վնասվելուց, ապա արձանի հեղինակի՝ Արմեն Դավթյանի կողմից վերանորոգվելուց հետո տեղադրվել է Իջեւան քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում՝ քաղաքի Ասլանյան փողոցում՝ Նիկոլ Փաշինյանի հայրական տնից ոչ հեռու: Իսկ Նիկոլ Փաշինյանին բուհի ավարտական դիպլոմից զրկած, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, ծագումով Իջեւան քաղաքից Գառնիկ Անանյանի կիսանդրին տարիներ շարունակ հառնում է Իջեւանի ավագ դպրոցի բակում, եւ ոչ ոք արձանը չի վնասում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կառավարությունը հավանություն է տվել «««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ադրանիֆների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը կիրառելու առանձնահատկությունների մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծին:

Նախագծի հիմնական նպատակներն են՝ զարգացնել Միության շրջանակներում մաքսային տարանցման միասնական համակարգը՝ վերջինի փոխգործակցությունը Միության անդամ չհանդիսացող պետությունների մաքսային տարանցման համակարգերի հետ հետագայում իրականացնելու նպատակով, կատարելագործել եւ զարգացնել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման համակարգը, պարզեցնել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման ժամանակ մաքսային եւ այլ վճարների վճարման պարտավորության կատարման ապահովում տրամադրելու կարգը: Նախագծով սահմանվում են նաեւ մաքսային եւ այլ վճարների վճարման պարտավորության կատարման ընդհանուր ապահովման դեպքում պարզեցված ընթացակարգերի կիրառման դեպքերն ու պայմանները, տրամադրման հաստատման առանձնահատկությունները, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ երաշխավորության կիրառման առանձնահատկությունները:

Հավանության է արժանացել նաեւ 2022 թ. ապրիլի 19-ին Մոսկվայում ստորագրված ««Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Համաձայնագիրն ուղղված է ապրանքների փոխադրումների ժամանակ պետական հսկողության միջոցների կրճատմանը եւ օրինական շրջանառության ապահովմանը: Համաձայնագրի կնքման հիմնական նպատակը հանդիսանում է Միության երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար Միությունում նավիգացիոն կապարակնիքների կիրառման կարգավորման հիմքերի եւ այդ հետագծման իրականացումը կազմակերպելու մեխանիզմների սահմանումը: Համաձայնագրով սահմանված են նավիգացիոն կապարակնիքների կիրառման պայմանները եւ կարգը, հետագծման օբյեկտների, ապրանքները տեղափոխող տրանսպորտի տեսակների, ապրանքների փոխադրումների հետագծման մասնակիցների, ազգային օպերատորների եւ հսկողական մարմինների տեղեկատվական փոխգործակցությանն առնչվող հիմնական դրույթները: Նավիգացիոն կապարակնիքների գործածմամբ հետագծումը կիրառվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ավտոմոբիլային եւ երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների, ինչպես նաեւ փոխադարձ առեւտրի շրջանակներում փոխադրվող սանկցիոն ապրանքների, ալկոհոլային արտադրանքի, ծխախոտի եւ ծխախոտային արտադրանքի նկատմամբ: Ըստ համաձայնագրի՝ Միության անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծումն իրականացնում են ազգային օպերատորները: Նախագծով կարգավորվում են նաեւ այն դեպքերը, երբ փոխադրումների հետագծման գործառույթները վերապահված են անդամ պետությունների պետական մարմիններին (կազմակերպություններին): Նախատեսվում է նաեւ ազգային օպերատորների միջեւ առանձին համաձայնագրի կնքում, որը կկարգավորի նրանց միջեւ իրավահարաբերությունները:

Գործադիրը հավանություն է տվել 2022 թ. մայիսի 24-ին ստորագրված ««Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ Բելառուսի Հանրապետության դատական փորձաքննությունների պետական կոմիտեի միջեւ դատափորձագիտական գործունեության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագծին: Համաձայնագրի կնքմամբ հնարավորություն կընձեռվի ծավալելու առավել սերտ համագործակցություն բարձրացնելու հանցավորության դեմ պայքարը՝ դատական փորձաքննության եւ քրեագիտության ժամանակակից մեթոդների եւ միջոցների ակտիվ կիրառման հիման վրա, ինչպես նաեւ իրականացնել դատափորձագիտական գործունեության եւ քրեագիտության ոլորտում փորձի եւ տեղեկատվության փոխանակում:

ԼՈՒՐԵՐ

ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Անկանխիկ գործարքների դեպքում կենսաթոշակառուներին 10 տոկոս հետվճար տրամադրելու ծրագրին մասնակցել է 17 հազար քաղաքացի: Կառավարության օգոստոսի 24-ի հերթական նիստի ժամանակ այս մասին հայտնեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

«Անկանխիկ գործարքների դեպքում կենսաթոշակառուներին 10 տոկոս հետվճար տրամադրելու ծրագիրը հուլիսի 1-ից աշխատում է, արդեն առաջին արդյունքներն ունենք: Միջոցառմանը միացած բանկերում սպասարկվող քաղաքացիների շուրջ 10 տոկոսը՝ 17 հազար քաղաքացի, միայն հուլիս ամսին իրականացրել է շուրջ 524 միլիոն դրամի անկանխիկ գործարքներ: Գուցե հարց առաջանա, որ մասնակիցների թիվը փոքր է, բայց նախքան միջոցառման մեկնարկն այս թիվը եղել է զրո, այսինքն՝ կենսաթոշակառուները քարտերով անկանխիկ գործարք չեն արել»,- ասաց Մկրտչյանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը անհրաժեշտ համարեց բանկերի հետ աշխատանքը ծրագրին մարդկանց մասնակցության թիվն ավելի ընդլայնելու համար: Փաշինյանը հավելեց, որ 173 հազար շահառուներից ծրագրին մասնակցում է 17 հազարը:

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Կառավարությունը երեկ՝ օգոստոսի 24-ին, որոշում ընդունեց 2022 թվականի սեպտեմբերի 1-ից բարձրացնել կենսաթոշակներն ու նպաստները: Կենսաթոշակների ու նպաստների բարձրացման հարցն ընդգրկված էր Կառավարության երեկվա նիստում, որն արժանացավ գործադիրի դրական եզրակացությանը:

Կառավարությունը, մասնավորապես, առաջարկում է սահմանել՝

- աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ 21000 դրամ (18000 դրամի փոխարեն),
- զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ 20000 դրամ (18000 դրամի փոխարեն),
- նվազագույն կենսաթոշակի չափը՝ 30500 դրամ (28600 դրամի փոխարեն),
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝

ա. առաջին խմբի հաշմանդամի համար՝ 45000 դրամ (43000 դրամի փոխարեն),

բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 35000 դրամ (33000 դրամի փոխարեն),

գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 32000 դրամ (30000 դրամի փոխարեն),

գ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 32000 դրամ (30000 դրամի փոխարեն):

Արդյունքում ակնկալվում է, որ աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կավելանա շուրջ 3100 դրամով կամ 7.1 տոկոսով, զինվորական կենսաթոշակները՝ 5200 դրամով կամ 6.8 տոկոսով:

Առաջարկվում է բարձրացնել նաեւ ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը՝ դրանք սահմանելով 30500 դրամ (28600 դրամի փոխարեն), իսկ հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 39000 դրամ (37000 դրամի փոխարեն):

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 9-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Վիգեն Ներկարարյան» Ա/Ձ-ի կողմից Տավուշի մարզի Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակներով ստորերկրյա ջրային ռեսուրսից 2.12 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2022 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Հայանիստ գյուղի վարչական տարածքում «Վալերի Եվրեյան Դերենիկ» ԱՁ-ի կողմից ձկնաբուծական նպատակով դրենաժային համակարգից 120լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ): Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2022 թվականի օգոստոսի 29-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պաշտպանության նախարարությունը նոր նախագիծ է դրել հանրային քննարկման, որով առաջարկվում է ներդնել պայմանագրային զինվորական ծառայության նոր համակարգ, ինչպես նաեւ շարքային կազմի կարճաժամկետ պարտադիր զինծառայություն՝ ՀՀ պետական բյուջե գումար վճարելու պայմանով:

Հիմնավորման մեջ նշվում է, որ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու գրավչությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու, արհեստավարժ պայմանագրային զինվորական ծառայության զարգացման համար նախադրյալներ ստեղծելու, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության փոխարեն շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման նոր համակարգ եւ շարքային կազմի կարճաժամկետ պարտադիր զինծառայության ընթացակարգ ներդնելու անհրաժեշտությամբ:

Նշվում է, որ գործող օրենքով ներդրվել է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համակարգ, որը ենթադրում է 36-ամսյա ժամկետով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության անցում՝ ՊՆ-ի հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքելու միջոցով: Համակարգը նախատեսում էր շարքային կազմի մյուս պարտադիր զինծառայողների համեմատ ավելի մեծ չափով ամսական դրամական բավարարման հաշվարկում (35.000-45.000 դրամ չափով), ամսական 7 օրացուցային օր ժամկետով արձակուրդի տրամադրում եւ ծառայության ժամկետի ավարտով կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքերում պատվովճարի հատկացում (5 մլն դրամ չափով): «Համակարգի ներդրումից հետո համապատասխան ծառայություն անցնելու ցանկություն հայտնողների քանակն ի սկզբանե չբավարարեց ակնկալվող քանակները՝ աստիճանաբար նվազելով, ինչպես նաեւ 2021-2022թթ. զորակոչերի ընթացքում չարձանագրվեց ոչ մի դիմում: Բացի այդ, 2020 թվականի ռազմական գործողություններից հետո բավական թվով զինծառայողներ վաղաժամկետ հրաժարվեցին ծրագրից եւ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 24-ամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով արձակվեցին զինվորական ծառայությունից: Ներկայումս ծրագրով զինվորական ծառայությունը շարունակում են ընդամենը երեք զինծառայող, որոնց ծառայության 36-ամսյա ժամկետն ավարտվում է 2023 թվականի հունվարին: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ներդնել նոր ծրագիր, այս անգամ՝ շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման միջոցով («Հայրենյաց պաշտպան» ծրագիր), որի ժամկետը նախատեսվում է 5 տարի, ինչպես նաեւ– կնքած պայմանագրի ժամկետի ավարտից հետո, անկախ զինծառայությունից արձակվելու կամ ծառայությունը շարունակելու ցանկությունից, կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքում այդ զինծառայողներին կհաշվարկվի պատվովճար՝5 մլն դրամ չափով, որը զինծառայողը (կամ քաղաքացին) տնօրինելու է իր հայեցողությամբ»,- ասված է նախագծի հիմնավորման մեջ:

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսվել է աստիճանական եւ կանոնակարգված ձեւով պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատման օրենսդրական հիմքերի ստեղծում, որի շրջանակներում, հաշվի առնելով նաեւ մի շարք օտարերկրյա պետությունների փորձը, առաջարկվում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության որոշակի ժամկետը, եւ, դրանով պայմանավորված, զինծառայողի պատրաստության ուսումնական փուլը լրանալու դեպքում (միջինը՝ չորսուկես ամիս) զինծառայողի կողմից ՀՀ պետական բյուջե 24 մլն դրամ վճարելու պայմանով զինծառայողին պարտադիր զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակելու հնարավորություն: Նշված գումարի չափը նախատեսվել է նաեւ այն տրամաբանությամբ, որ մեկ պարտադիր զինծառայողի փոխարեն 5 տարի ժամկետով հնարավորություն է ընձեռվելու պայմանագրային զինծառայողին հաշվարկել մինչեւ 400.000 դրամ ամսական վարձատրություն, ինչը արհեստավարժ զինվորական ծառայության համակարգ ներդնելու մոտիվացիոն կարեւորագույն բաղադրիչ է: Գործընթացը փոխկապակցված է նաեւ մարտական եւ դրան հավասարեցված խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական եւ շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման ու, դրա հիման վրա, լրավճարների սահմանման համակարգի ներդրման հետ:

Team Telecom Armenia

«ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ»՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

STARMUS փառատոնին ընդառաջ՝ Team Telecom Armenia-ն Պլանետարիում Երեւանում անցկացրեց «Տիեզերական զրույցներ» միջոցառումը՝ հնարավորություն տալով դպրոցահասակ երեխաներին հանդիպելու աստղաֆիզիկոս, STARMUS փառատոնի հիմնադիր Գարիկ Իսրայելյանի հետ:

Կարեւորելով փառատոնի հետ համագործակցությունը՝ Team Telecom Armenia ընկերության կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը նշեց. «Մենք միացել ենք STARMUS-ին գիտության, տեխնոլոգիաների ու արվեստի ուղղությունների զարգացմանն աջակցելու նպատակով: Հաշվի առնելով, որ այս փառատոնի հիմնական մասնակիցները մեծահասակներն են, որոշեցինք կազմակերպել այնպիսի միջոցառում, որը կլինի հատուկ երեխաների համար եւ նրանց մոտ կառաջացնի հետաքրքրություն գիտության ու տիեզերքի հանդեպ»:

Միջոցառման ընթացքում 80-ից ավել երեխաներ լսեցին Գարիկ Իսրայելյանի «Կյանքը տիեզերքում» թեմայով ելույթը, տվեցին իրենց հետաքրքրող բոլոր հարցերն ու դիտեցին մեր Արեգակնային համակարգի, մոլորակների եւ արբանյակների մասին պատմող «Երկրագնդից տիեզերք» ֆիլմը: Միջոցառման ավարտին «Տիեզերք» խմբի անդամներն անցկացրեցին մրցույթ, որի հաղթողները նվեր ստացան «ՄՏԿ: Մարդու տունը տիեզերքում» գիրքը:

«Շատ եմ ուրախանում, երբ տեսնում եմ երեխաներին աստղացուցարանում, որովհետեւ դրանց շնորհիվ են նրանք հետագայում գալիս դեպի աստղագիտություն? աստղերը ոգեւորում են փոքրիկներին եւ առաջացնում հարցեր տալու ցանկություն, տիեզերքի վերաբերյալ հանելուկային առաջին զգացողություններ: Այո՛, Պլանետարիումի հայերեն համարժեքն Աստղացուցարանն է: Սթարմուսն այդ առումով նման է աստղացուցարանի, մեր նպատակը նույնպես ոգեշնչելն է: Կուզեմ, որ այստեղ երեխաները հաճախ լինեն, մասնակցեն նման միջոցառումների եւ տարվեն նորը բացահայտելու գաղափարով»,- ասաց Գարիկ Իսրաելյանը:

STARMUS VI-ը տեղի է ունենալու սեպտեմբերի 5-10-ը: Փառատոնի ծրագրում նախատեսվում են համագումարների ու գիտաժողովների շարք, բազմաբնույթ մշակութային միջոցառումներ, գիտական ճամբարներ, ինչպիսիք են աշխարհահռչակ ջազ դաշնակահար Տիգրան Համասյանի, Queen խմբի համահիմնադիր, երաժիշտ, աստղաֆիզիկոս եւ լուսանկարիչ դոկտոր Բրայան Մեյի համերգները, STARMUS ճամբարը Ազատության հրապարակում, Աստղային լուսանկարչության դպրոցը եւ այլն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՈՂԲ ՉԻ ԼԻՆԻ

ՀԱՅԿՈՅԻ ՀԱՄԵՐԳԻ ՄԱՆՐԱՄԱՍԵՐԸ

Օգոստոսի 25-ին՝ Հայկոյի ծննդյան օրը՝ Երեւանում, եւ սեպտեմբերի 20-ին ԱՄՆ-ում տեղի կունենան Հայկոյին նվիրված համերգներ: Ռոմանսների արքա Հայկոն իր կարճ կյանքի ընթացքում հսկայական հետք թողեց ոչ միայն հայկական ռոմանսի ձեւավորման, այլ նաեւ հայկական ժամանակակից կինոմատոգրաֆիայում: Նրա ստեղծագործությունները ֆիլմը դարձնում են լիարժեք, հուզում ու ոգեշնչում են:

Հայկոյին նվիրված համերգի առաջին մանրամասների մասին ArmLur.am-ը զրուցել է համերգի պրոդյուսեր Իրինա Վարդանյանի հետ:

«Իրականում շատ դժվար է, պատասխանատվությունը շատ մեծ է, որովհետեւ Հայկը, լինելով ուրախ, զվարթ, թեթեւ մարդ, յուրաքանչյուր համերգին մոտենում էր շատ պատասխանատու ձեւով, նույնն էլ հիմա է մեզ մոտ: Կատարում ենք ահռելի մեծ աշխատանք, որպեսզի համերգը, ոճը չտարբերվեն Հայկոյի նախորդ համերգներից: Կարեւոր խնդիր ենք դրել մեր առջեւ՝ չկորցնել կապը հանդիսատեսի հետ: Համերգը լինելու է Հայկոյի մասին Հայկոյի հետ: Բացի Հայկոյի մշտական թիմից, այս անգամ միացել են մեզ Կարեն Սեւակը, երիտասարդ կատարողներ: Համերգի մեջ ներառված են նաեւ արտասահմանյան արտիստներ. մի խոսքով, ամեն ինչ փորձում ենք անել Հայկոյի շուրջ, Հայկոյի համար: Ամեն ինչ անում ենք, որպեսզի համերգը հանկարծ չվերածվի կոմերցիոն համերգի կամ ինչ-որ մեկի համար լինի փիառի միջոց»,-նշեց նա:

Մեծ երաժշտի համերգից անմասն չեն մնում նաեւ նրա ընտանիքի անդամները, հատկապես՝ որդին՝ Արմանը, որը համերգի առաջին իսկ օրվանից մեծ պատասխանատվությամբ է պատրաստվում համերգին. «Գաղտնիք չէ՝ Հայկոյի եւ որդու՝ Արմանի կապը շատ մեծ է եղել: Արմանը ներկա է եղել Հայկոյի բոլոր համերգների փորձերին. եթե նախկինում նա ուրիշ ձեւ էր ընկալում այդ ամենը, ապա հիմա շատ պատասխանատու կերպով է մոտենում յուրաքանչյուր դետալի: Նրա մասնակցությամբ շատ հետաքրքիր մտահղացումներ կան: Ուզում եմ ընդգծել, որ մեզ հետ են Հայկոյի բոլոր ընկերները, ընտանիքի անդամները, մեծ դեր ունի եղբայրը՝ Վահեն: Հայկի հետ կապված բոլորն այնքան ասելիք ու հիշողություններ ունեն, որ փորձել ենք հնարավորինս ընդգրկել բոլորին: Ուզում եմ հատուկ ընդգծել նաեւ մեր արտիստների մեծ պատասխանատվության եւ պատրաստակամության մասին: Չեմ կարող նկարագրել, թե ինչ հոգով եւ սրտով ենք պատրաստվում համերգին, կարծես ամեն մեկս, մի բան անելով, ավելի մոտ ենք մեզ զգում դեպի նա: Գիտեք, Հայկոն առհասարակ շատ մեծ ոգեւորվածությամբ էր սպասում իր համերգներին, եւ հիմա մենք փորձում ենք ամեն ինչ անել, որպեսզի մոտ լինենք նրան»,-ընդգծում է Իրինա Վարդանյանը:

Մեր զրուցակցի խոսքով՝ Անահիտ Սիմոնյանը եւ Հայկոյի մայրը՝ տիկին Սուսաննան եւս մեծ մասնակցություն ունեն համերգի կայացման գործում, եւ ամեն բան նախապես քննարկվել է նրանց հետ:

«Շատ են այն մարդիկ, որոնք ճանաչել են Հայկոյին ու ասում են՝ ցավը շատ մեծ է, եւ երեւի թե չկարողանան ներկա գտնվել, բայց մենք ամեն ինչ արել ենք, որ շատ դժվար չլինի: Մենք ամեն ինչ արել ենք, որ ողբ չլինի: Համերգը լինելու է Հայկի նման պայծառ, ժպիտով: Մենք ամեն տեղ թողել ենք Հայկո, նա ամեն տեղ կա, հանդիսատեսն ամեն վայրկյան զգալու է նրա ներկայությունը, ուղղակի տպավորություն ենք ստեղծելու, որ նա պարզապես հեռվում ինչ-որ մի տեղ հետեւում է մեզ եւ ժպտում»,-ընդգծեց մեր զրուցակիցը:

Իրինայի խոսքով՝ համերգի ողջ հասույթը օգտագործվելու է բարեգործական նպատակով եւ նրա կիսատ թողած երգերի պատրաստմանն է ուղղվելու: «Առջեւում դեռ շատ լավ մտքեր կան, եւ նախատեսում ենք ավելի մեծ համերգ կազմակերպել»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Հայտարարություն

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 15:00-ին Յուրի Սելիպանովի սնանկության գործով կառավարիչ Վ.Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Յուրի Սելիպանովի սեփականություն իրավունքով պատկանող հետեւյալ գույքի աճուրդային վաճառք՝ բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ- 1. ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Չարենցի փող. 27ա շենքի բակում գտնվող ավտոտնակը/36.9 քմ./ :

Մեկնարկային գինը սահմանվում է 5 146 492 ՀՀ դրամ,

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1% չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Յուրի Սելիպանովի սնանկության հատուկ հաշվին <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472304369220000 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Վ. Էլոյանին / 041 44 58 57 /:

ԲԱՑ ԿԹՈՂՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» նորեկ, Հայաստանի հավաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը բաց կթողնի հռոմեական «Լացիոյի» դեմ առաջիկա հանդիպումը: Իտալիայի առաջնության երրորդ տուրի այդ խաղը տեղի կունենա օգոստոսի 26-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 22:45-ին: Հայ ֆուտբոլիստը ծնկատակի ջլի վնասվածք էր ստացել Իտալիայի առաջնության առաջին տուրում՝ «Լեչեի» դեմ հանդիպման առաջին խաղակեսում անցկացնելով 33 րոպե:

«Մխիթարյանի վերադարձը խաղադաշտ սպասվում է Իտալիայի առաջնության չորրորդ տուրում»,- գրում է իտալական Corriere dello Sport-ը: «Ինտերը» օգոստոսի 30-ին կընդունի «Կրեմոնեզեին»: Իտալացի Սիմոնե Ինձագիի գլխավորած թիմն առաջին երկու հանդիպումներում հաղթել է եւ «Նապոլիի» ու «Ռոմայի» հետ երեք առաջատարների թվում է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 14:30-ին Սեդա Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Վ.Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Սեդա Մկրտչյանի պարտավորությունների համար <<Արարատբանկ>> ԲԲԸ-ում գրավադրված սեփականություն իրավունքով վերջինիս պատկանող հետեւյալ գույքի աճուրդային վաճառք՝ բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ- 1. ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Կուրղինյան փող., տուն 32 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Ընդհանուր շինության մակերեսը 363.0 քմ է, որից 1-ին հարկ՝ 116.9քմ, 2-րդ հարկ 124.6քմ, նկուղային հարկ 121.5քմ, շինության պատերը քարից են, շինության տանիքը քառալանջ, կղմիդե վահանակներ, մուտքի դռները մետաղյա է, ներսի դռները փայտ, բնակել տան ներքին հարդարանքը ընդհանուր առմամբ գտնվում է լավ վիճակում:

Մեկնարկային գինը սահմանվում է 142 700 000 ՀՀ դրամ,

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մասնակցության վճարի, որը կազմում է 200 000 ՀՀ դրամ վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Սեդա Մկրտչյանի սնանկության հատուկ հաշվին <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ի <<Տիգրան Մեծ>> մասնաճյուղի հետեւյալ հաշվեհամարին՝ 220531491078000 մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Վ. Էլոյանին / 041 44 58 57 /:

● Օգոստոսի 28-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «ԱմուսնաՑավ» սթենդափը: Տոմսերի արժեքը՝3000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ովքե՞ր կարող են ընդունվել «Վետերան» օթեւան:

Մերի Ավանեսյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Վետերան» օթեւանը հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարան է, այն տրամադրվում է սեփականության կամ համասեփականության իրավունքով բնակարան (բնակելի տուն) չունեցող, ժամանակավոր կացարաններում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող, ինքնասպասարկման ունակություն ունեցող, աշխատանքի վետերանի կարգավիճակ կամ 40 եւ ավելի տարվա աշխատանքային ստաժ ունեցող եւ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող տարեց անձանց, «հաշմանդամ-երեխա» կարգավիճակ ունեցող երեխայով միածնող ընտանիքի կամ ամուսնական զույգի, եթե ամուսիններից երկուսն էլ ունեն հաշմանդամություն, եւ եթե այդ անձինք (նրանց ընտանիքները) չեն օտարել բնակարան (բնակելի տուն) դիմելուն նախորդող հինգ տարվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններ են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները եւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն անձինք, որոնք մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, ինչպես նաեւ պատերազմի տարիներին Լենինգրադի բլոկադայի մասնակիցները եւ ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անչափահաս գերիները, նախկին ԽՍՀՄ ներքին գործերի ու պետական անվտանգության մարմինների ղեկավար եւ շարքային կազմի այն անձինք, որոնք հաշմանդամ են դարձել ծառայողական պարտականությունները կատարելիս վիրավորվելու, կոնտուզիաների եւ ստացած վնասվածքների հետեւանքով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվողի մահվան դեպքում ո՞վ է կազմակերպում հուղարկավորությունը:

Կարեն Սարիբեկյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հուղարկավորությունը կազմակերպում են հանգուցյալի ընտանիքի անդամները կամ այլ ազգականներ: Այն դեպքում, երբ մահացած անձը չունի ընտանիքի անդամներ կամ այլ ազգականներ, կամ նրանք հրաժարվում են կազմակերպել հուղարկավորությունը կամ մահվան մասին տեղեկացվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, չեն ներկայանում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, հուղարկավորությունը կազմակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության կողմից:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Թաղման նպաստ ստանալու համար անձը անհրաժեշտության դեպքում ներկայացնում է նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ սահմանված, գերեզմանատան տնօրինության տված տեղեկանքը՝ անձին Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորելու մասին (տեղեկանքի բնօրինակը պահվում է համապատասխան ստորաբաժանումում), եթե մահվան վկայականը կամ մահվան փաստը հավաստող փաստաթուղթը տվել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, կամ, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի տված մահվան վկայականում կատարված գրառման համաձայն, կենսաթոշակառուն մահացել է օտարերկրյա պետությունում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի բնակիչ 29-ամյա Սոս Ավագյանը իր վարած BMW մակնիշի ավտոմեքենայով Մաշտոցի պողոտա 9 հասցեի դիմաց բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված BMW X5 մակնիշի ավտոմեքենային: Վթարի հետեւանքով, բարեբախտաբար, տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: